թում դէմը: Եւ ահա մի անգամ, Նաւասարդի տօներին Գնէլին իր մօտ կանչելու եւ սպաննելու ծրագիր մշակեց Արշակ Թագաւորը», ասում է պատմիչը: Ու արքան մարդ է ղրկում Գնէլի յետեւից, որ կնոջ եւ տնեցիների հետ միասին Թագաւորի բանակատեղին երթայ, խնճոյքի. թէ՝ «Արշակ Թագաւորը չի՛ կամենում Նաւասարդեան տօները առանց քեզ անց կացնել...» (Դ. 15):

Այս եւ ուրիշ հատուածներ Փաւստոսի պատմութեան մէջ՝ մի-մի անգին նիւթեր են Հայ Ազգագրութեան պատմութեան համար: Նոյնչափ կարեւոր նշանակութիւն ունին նաեւ պատմական այն բազմաթիւ առասպելները եւ աւանդավէպերը, որ պահել է մեզ Փաւստոս Բուզանդ՝ մի շարք հայ քաջարի իշխանների եւ յատկապէս Մամիկոնեան տոհմին պատկանող մի քանի հերոս զօրավարների, այլ և եկեղեցական ծանօթ դէմքերի մասին:

Այդ բոլոր զրոյցները Փաւստոսի օրով անշուշտ պատմւում էին ժողովուրդի մէջ: Եւ առհասարակ, մեր պատմիչի երկի կենդրոնում կանգնած են մի կողմից Մամիկոնեան տոհմի ներկայացուցիչները իբրեւ Արշակունեաց տան ամուր յենարաններ, իսկ միւս կողմից՝ Լուսաւորչի տոհմը: Առաջինի կենդրոնական դէմքերն են՝ Վասակ, Մուշեղ եւ Մանուէլ զօրավարները, իսկ Լուսաւորչի տոհմինը՝ Ներսէս Պարթեւը: Ինչպէս դոցա բոլորի — նաեւ ուրիշների— այնպէս եւ Արշակ Թագաւորի անունից շուրջը հայ ժողովուրդը գեղեցիկ զրոյցներ է հիւսած եղել, իբրեւ իր սիրած հերոսների: Եւ եթէ Փաւստոս եւ մեր միւս պատմագիրները հայ հեթանոսական շրջանից եկող վիպական պատմուածքները եւ գուսանական երգերը փցուն, անմիտ բաներ են համարում, վստահութեան ո՛չ արժանի, դորա փոխարէն՝ հալած իւղի տեղ են դնում քրիստոնէական շրջանից եկող ժողովրդական զրոյցները, եւ այդ ամէնը իբրեւ զուտ պատմութիւն աւանդում գալոց սերունդներին:

Ո՛րչափ յուզիչ, միեւնոյն ժամանակ ո՛րչափ իրատական է այն զրոյցը, որ հայ ժողովուրդը հիւսել է դժբախտ Արշակ Բ. թագաւորի շուրջը: Իր եւ իր յաջորդների օրով՝ Հայաստան երեսնամեայ պատերազմների թատր էր դարձած: Ընկած Արեւելքի եւ Արեւմուտքի, Պարսկաստանի եւ Բիւզանդիոնի երկանաքարի արանքը, Հայ Աշխարհը ոտքի կոխան էր — ինչպէս միշտ, դորանից առաջ եւ յետոյ — երկու աշխարհակալ պետութեանց աւերակուռ բանակների համար:

«Այս երեսուն տարի է ինչ՝ մեր Արշակ Թագաւորը իշխում է, բայց մենք ոչ իսկ մէկ տարի հանդիստ ունեցանք պատերազմներից», ասում է պատմիչը (Դ. 51): Գիտակ իր եւ իր երկրի ոյժերի թուլութեան՝ հանդէպ աշխարհակալ դրացիների, Արշակ ջանք էր թափում, մերթ Տիգրանի եւ մերթ Բիւզանդիոնի վրայ յենուիլ, սեփական ինքնուրոյնութիւնը պահպանել կարենալու համար: Եւ սակայն, ոչ ինքը կատարեալ վստահութիւն ունէր մէկի կամ միւսի վրայ, ոչ էլ նոքա՝ ի՛ր վրայ:

Եւ Արշակ վերջ ի վերջոյ զոհ գնաց արքայից արքայ Շապուհի դաւադրութեան: Վստահելով նորա «հաւատարիմ երդման» ու թագաւորական հաւատիացման, որի հաստատութեան համար Շապուհ հայոց թագաւորին — համաձայն իրենց «նուիրական օրէնքին» — «իր վարագապատկեր մատանիով կնքած աղ է ղրկում», Արշակ իր հետեւորդների հետ միասին գնում է Տիզրոն, պարսից արքայանիստ քաղաքը:

Շապուհ «կախարդների, աստեղագէտների ու քաւդեաների» խորհուրդն է հարցնում: «Ես շատ անգամ կամեցայ սիրել Հայոց Արշակ Թագաւորին», դիմում է նոցա Շապուհ, «բայց՝ նա միշտ էլ անարգեց ինձ... Այս իրեսուն տարի է ահա, ինչ մենք, Արիացիքս, անընդհատ ճակատամարտների մէջ ենք նորա հետ, բայց՝ կարող չեղանք եւ ո՛չ մէկ տարի յաղթել նորան: Այժմ ահա, նա ինքը իր ոտով է վեր կացել ու եկել»: Եւ ուզում է կախարդներից իմանալ՝ արդեօք Արշակ այնուհետեւ գոնէ հնազանդ պիտի մնա՞յ իրեն, արքայից արքային (Դ. 54):

Քաւդեաները մի օր ժամանակ են խնդրում Շապուհից, պատասխան-խորհուրդի համար: Յաջորդ առաւօտը «բոլոր քաւդեաները եւ աստեղագէտները ժողովւում եւ գալիս են արքայից արքայի մօտ»: Նոցա առաջին հարցը լինում է Թագաւորին.